ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 117

ք. Երևան 24.05.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02656925; գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ագաթանգեղոսի 2) (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ հավելված 1-ը, հավելված 1.1-ը և հավելված 2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկումներ չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել):
Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով, որ «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ին, գնման գործընթացին՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-5/1» ծածկագրով գնման ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՍՊԵԿՏՐ ԱԷՐՈՍՓԵՅՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ